01/10.1/3804-09
2009-06-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. 2-րդ հոդվածի 1-ին մասով և 4-րդ հոդվածով նախատեսված դրույթները չեն բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ։

2. 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ այն ամբողջական ներառված է գործող օրենքի 16-րդ հոդվածի «ժա» ենթակետում և ընդունելի չէ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ իրականացվող անվտանգության միջոցառումների տարանջատումը՝ պայմանավորված գաղտնիքներին առնչվելու իրավունքով կամ դրա բացակայությամբ։

3. 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լրացումը կնեղացնի օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում համապատասխան մարմինների հետ որոշակի կատեգորիայի անձանց համագործակցության շրջանակը, ինչը խիստ կնվազեցնի հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը և կխոչընդոտի հետախուզական և հակահետախուզական գործունեության իրականացմանը։ Առաջարկվող լրացումը հիմնավորման կարիք ունի։

Բացի դրանից, իրավական տեխնիկայի առումով՝

1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 2-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները։ Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի 4-րդ հոդվածին,

բ. 2-րդ մասում «ժժ» համարակալումն անհրաժեշտ է փոխարինել «ի» համարակալմամբ.

2) 3-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասում «նախադասության» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասի» բառով, իսկ «անձին» բառը՝ «անձանց» բառով, քանի որ «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում «անձին» բառ նախատեսված չէ,

բ. 2-րդ մասում 8-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դրույթներին։

2. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածի՝

ա. 1-ին մասում «բովանդակությամբ «կառավարության անդամների» բառերն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ՝ 2) կառավարության անդամների» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

2) 2-րդ մասի՝

ա. վերաբերյալ հայտնում ենք, որ «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ 4-րդ կետ նախատեսված է, ուստի, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, օրենքի նախագծի 2-րդ մասն անհրաժեշտ է լրացնել նոր կետով,

բ. «հետևյալ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բովանդակությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գ. Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-618-12.05.2009-ՊԱ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ի N ՀՕ-294 օրենքի /այսուհետ՝ օրենք/ 15-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «իդ» կետով՝

«իդ/ տարածել ՀՀ արտաքին եւ ներքին քաղաքականության իրականացմանն օժանդակող տեղեկատվություն կամ ապատեղեկատվություն»։

***Հոդված** 2.* Օրենքի 16-րդ հոդվածում՝

1. ա/ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«ա/ Հանրապետության Նախագահին, Ազգային Ժողովին եւ Կառավարությանը տեղեկատ-վություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին, ինչպես նաեւ Հանրապետության Նախագահի կարգադրու-թյամբ եւ Կառավարության որոշմամբ այդպիսի տեղեկատվություն տրամադրել այլ պետական մարմիններին ու կազմակերպություններին»,

2. հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ժժ» կետով.

«ժժ/ Ապահովել օտարերկրյա պետություններ գործուղված ՀՀ այն քաղաքացիների եւ նրանց ընտանիքի անդամների անվտանգությունը, ովքեր իրենց գործունեության բնույթով ունեն ՀՀ օրենսդրությամբ պետական գաղտնիք համարվող տեղեկություններին առնչվելու իրավունք»։

***Հոդված** 3.* Օրենքի 23-րդ հոդվածում՝

1. առաջին նախադասության «անձին» բառից հետո լրացնել «չափահաս եւ գործունակ» բառերը, իսկ երկրորդ նախադասությունը հանել։

2. 1-ին մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով «Ազգային անվտանգության մարմինները պարտավոր են գաղտնի պահել իրենց մոտ գաղտնի հիմունքներով համագործակցող եւ համագործակցած անձանց անհատական տվյալները։ Ազգային անտանգության մարմիններն իրավունք չունեն իրենց գործունեության ընթացքում որպես համագործակցող անձ ներգրավելու՝

1/ պատգամավորների

2/ կառավարության անդամների

3/ դատավորների

4/ սահմանադրական դատարանի անդամների

5/ համայնքի ղեկավարների

6/ համայնքի ավագանու անդամների

7/ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների

8/ ոստիկանության, զինված ուժերի աշխատակիցների, քրեակատարողական ծառայողների, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացվող հակահետախուզական գործունեության իրականացման նպատակով ներգրավման, ինչպես նաեւ դատախազության եւ այլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների»։

***Հոդված** 4.* Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ «Ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում են Հանրապետության Նախագահը, Ազգային Ժողովը եւ Կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ եւ օրենքներով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում»։

***Հոդված** 5.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Նախագիծ
Պ-618[1]-12.05.2009-ՊԱ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Օպերատիվ-Հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ ՀՕ-223-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 12-րդ հոդվածի 3-րդ մասում.

1.2-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ «կառավարության անդամների»։

2. 3-րդ կետից հետո լրացնել հետեւյալ նոր «4/», «5/», «6/» եւ «7/» կետերով.

«4/ Սահմանադրական դատարանի անդամների»

«5/ Համայնքի ղեկավարների»

«6/ Համայնքի ավագանու անդամների»

«7/ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Օրինագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է համապատասխան իրավասու մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ ազգային անվտանգության մարմինների կողմից իրենց գործունեության վերաբերյալ Ազգային Ժողովին համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտությամբ։